

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Եկեղեցականք-Բեմականք

Կիր. 1 Սեպտ.- Ը. օր Վերափոխման: Ըստ սովորութեամբ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեամբ Տաճարի վերմատամ Երաշխաւոր Ս. Աստուածածիմ մատրամ մէջ: Պատարագեց Տաճարիմ Տեսուչը՝ Գերշ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան:

Բշ. 2 Սեպտ.- Նախատոմակիմ ի Ս. Յակոբ մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

Գշ. 3 Սեպտ.- Ս. Յովակիմայ եւ Ամմայի: Ըստ սովորութեամբ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածմայ Տաճարիմ մէջ, Հայր Յովսէփի գերեզմանիմ վրայ: Պատարագեց Տաճարիմ Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայմեան:

Ծր. 7 Սեպտ.- Ս. Թովմայի առաքելոյմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարմ էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

- Նախատոմակիմ ի Ս. Յակոբ մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

Կիր. 8 Սեպտ.- Գիւտ Գօտույ Ս. Աստուածածմի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածմայ Տաճարիմ մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանիմ վրայ: Պատարագեց եւ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան: Ապա կատարուեցաւ հոգեհամզստեան պաշտօն երկու օրեր առաջ Տաճարի մաքրութեամբ մասնակցող բարեպաշտ տիկիմներու եւ օրիորդներու համագումարապաշտից հոգիներում համար: Արարողութեանց աւարտիմ՝ հոգեսուրբ տրուեցաւ պարտէզը:

Ծր. 14 Սեպտ.- Նիկիոյ Ս. Ժողովոյ (325): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարմ էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 15 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմատամ մատրամ մէջ: Ժամարարմ էր Հոգշ. Տ. Ամուշաւան Ծ. Վրդ. Զըջանեան:

Ուր. 20 Սեպտ.- Նախատոմակիմ ի Ս. Յակոբ մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

Ծր. 21 Սեպտ.- Ծմումդ Ս. Աստուածածմի: Առաւօտում, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. զլխաւորութեամբ, Միաբան Հայրեր իմքմաշարածերով եկան Գեթսեմանիի ձորը, եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածմայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանիմ վրայ օրում համդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Համդիսապետ Սրբազանը:

Կիր. 22 Սեպտ., Բարեկենդան Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմատամ մէջ: Ժամարարմ էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ծր. 28 Սեպտ.- Տօմ եկեղեցւոյ ի Նաւակաւոյ Ս. Խաչիմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարմ էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մամկասարեան:

- Խաչվերացի մեծահամդէս մախատօմակիմ ի Ս. Յակոբ մախագահեց Լուսարարապետ Գերշ. Դաւիթ Եպս., որ ապա Ս. Խաչի մատուցեց համդիսի փոխադրեց Աւագ Սեղան:

- Գերշ. Սրբազանը մախագահեց մաւե գիշերասկիզբիմ, Մայր Տաճարիմ մէջ պաշտօնած «Եկեցեց» ի եւ Հսկման կարգերում:

Կիր. 29 Սեպտ.- Տօմ ՎԵՐԱՅՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ (629): Օրում համդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանի վրայ մատուցեց եւ Խաչի խորհուրդիմ շուրջ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան: Գերշ. Տ. Կիրեղ Եպս. մախագահեց Մեկգոմեան բարերար եղբարց հոգիներում համար կատարուած տարեկան հոգեհամզստեան պաշտամունքիմ:

- Կեսօրէ ետք, Մայր Տաճարիմ մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահամդէս «Ամդաստան»ը: Համդիսապետ էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

Բշ. 30 Սեպտ.- Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատրամ մէջ պատարագեց Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրմէքեան: Հոգեհամզստեան կարգիմ մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպիսկոպոս:

Ծր. 5 Հոկտ.- Տօմ Խաչի: Ս.

Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշամ վերմամատրամ մէջ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծերպէթեան: Կիր. 6 Հոկտ.- Բարեկենդան վարագայ Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմամատրամ մէջ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Ուր. 11 Հոկտ.- Նախատոմակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գեորգ Վանքի եկեղեցւոյ մէջ: Համդիսպետ էր Գերշ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Ծր. 12 Հոկտ.- Ս. Գեորգայ գորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գեորգ վանքի եկեղեցւոյ մէջ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: Բարոզեց Հոգշ. Տ. Անուշահմ Ծ. Վրդ. Զոլջանեան: Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հոգշ. Տեսչէն:

- Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու մախատոմակը մեր վերմամատրամ մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն մերս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 13 Հոկտ.- Տօմ Վարագայ Ս. Խաչի (660): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերմատան մատրամ մէջ: Ապա, Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Բրիստոսի Ս. Գերեզմանի վրայ: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը քարոզեց, անդրադառնալով 29 Սեպտեմբերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կայացած Միւռնօրինակէն շուրջ եւ ապա մախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.-ի Օծման 36-րդ տարեդարձին առիթով կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:

Ծր. 19 Հոկտ.- 72 աշակերտացմ Բրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի մերքին գաւթին մէջ գտնուող Ս. Գեորգայ Սեղանին վրայ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Կիր. 20 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Ռեմիլի Ս. Գեորգայ Վանուց տարեկան ուխտագնացութիւնը: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Բարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան, մերկայացնելով կեանքն ու հրաշագործութիւններն մեծ սուրբին: Բազմաթիւ ժողովուրդ փութացած էր հոռ, երուսաղէմէն, Եաֆայէն, Հայֆայէն եւ այլ շրջաններէ: Եղաւ մանւ մատաղի օրհմութիւն:

Ուր. 25 Հոկտ.- Թարգմանչաց մախատոմակին ի Ս. Յակոբ մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

Ծր. 26 Հոկտ.- Ս. Թարգմանչաց Վարդապետացմ մերոց (Տօմ ազգային եւ եկեղեցական):

- Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան եւ քարոզեց յաւուր պատշաճի: Կիւլպէնկեան գերդաստանի - Սարգիս, Տիրուհի, Գալուստ, Նուարդ - հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհամզստեան պաշտօնին մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

Կիր. 27 Հոկտ.- Ա. Տարեդարձ Գահակալութեան Ամեն. Տ. Թորգոմ Բ. Պատրիարքին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմատան մատրամ մէջ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Անուշահմ Ծ. Վրդ. Զոլջանեան:

Ծր. 2 Նոյմ.- Ս. Զորից Աւետարանչացմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին վրայ բացուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրամ մէջ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 3 Նոյմ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մամկասարեան:

Բշ. 4 Նոյմ.- Ս. Յովսէփայ Աստուածածիօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերեզմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամաբարմ էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան:

Ծր. 9 Նոյմ.- Ս. Երկուտասան Վարդապետացմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարմ էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Բէշիշեան:

- Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրերու ուխտէն ետք, վերջնոյս կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգու-

քիւմ եւ մախատօմակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան համդիսաւոր թափօր Տաճարէմ մերս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Գուսամ Վրդ. Ալմանեան:

Կիր. 10 Նոյմ.- Գիւտ հաշ (326): Գիշերայիմ եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հոն մատուցուեցաւ ման Ս. Պատարագը: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ժիրայր Ծ. Վրդ. Թաշմեան (Փարիզէմ ժամամած ուխտաւորներու խումբի մը հետ): Ապա կազմուեցաւ մեծահամդէս թափօր, զլիաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ ապա իջաւ Գիւտ հաշի այրը եւ յետոյ բարձրամալով Ս. Գերեզմանի շրջափակը երկոց դարձաւ Սրբավայրիմ շուրջ: Ն. Ամեն. ամպիովանիի տակ եւ հաշափայտի մասունքն ի ձեռնի կը մախագահէր թափօրիմ, որ աւարտեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Ծր. 16 Նոյմ.- Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէմ Վրդ. Յովակիմեան:

Կիր. 17 Նոյմ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծերպէթեան:

Ուր. 22 Նոյ.- Կէսօրէ ետք ժամը 2:30-իմ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի զուխ Միաբանութեան, մեկնեցաւ Հրեշտակապետաց եկեղեցիմ, որուն քառամեայ մորթութիւնները աւարտած ըլլալով՝ օծեց ամոր եօթր խորամները եւ ապա մախագահեց Գաբրիէլ-Միքայէլ՝ Հրեշտակապետաց տօմի մախատօմակիմ:

Ծր. 23 Նոյմ.- Տօն Ս. Հրեշտակապետաց Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցիմ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսամ Վրդ. Ալմանեան: Ապա, Գերշ. Ս. Սեւան Եպս. մախագահեց Ազգային բարերարութեան Աղանձի ձէվահիրմեանի եւ պարագայից համար կատարուած տարեկան համգտեան պաշտամունքիմ:

Կիր. 24 Նոյմ.- Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ դարձեալ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Ծր. 30 Նոյմ.- Ս. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Աբղ. Իփրաճեան:

Կիր. 1 Դեկտ.- Բարեկեմդան Յիսմակի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջամեան:

Գշ. 3 Դեկտ.- Նախատօմակիմ ի Ս. Յակոբ մախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.:

Դշ. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածմի: Առաւօտում, Գերշ. Տ. Սեւան Եպս. Դարիպեանի զլիաւորութեամբ, Միաբան Հայրեր իմքմաշարժերով մեկնեցան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածմայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանիմ վրայ օրուան համդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, որ ապա մախագահեց Ազգային բարերար Կիլլիպի Կիլպէմկեանի եւ գերդաստանի մըջեցելոց հոգիներուն համար կատարուած տարեկան համգտեան պաշտամունքիմ: Ամօրեւոտ օդի պատեանաւ, «Հրաշափառ»ը սկսաւ Տաճարի մուտքէմ եւ ոչ գաւթէմ:

Ծր. 7 Դեկտ.- Ս. Գրիգոր Սքանչելագործիմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 8 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ մախագահեց եկեղեցւոյ մորթութեան եւ բարեգարդման սատարած ամօրու համգտեալ պարագաներու հոգիներուն ի համգիստ կատարուած պաշտամունքիմ:

Ուր. 13 Դեկտ.- Նախատօմակիմ ի Ս. Յակոբ մախագահեց Լուսարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս.:

Ծր. 14 Դեկտ.- Ս. Առաքելոց եւ առաջին Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէմ Վրդ. Յովակիմեան:

Կիր. 15 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերմամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծերպէթեան:

Ծր. 21 Դեկտ.- Ս. Նիկողայոսի Սքանչելագործիմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայցուեցաւ մէջ, երկու օրեր առաջ գուգա-

դիպած Հարցմ եզրիպատուցող տոմիմ առի-
թով: Ժամարարմ էր Հոգշ. Տ. Գուսամ
Վրդ. Ալմամեան: Վերաբերումը կատա-
րուեցաւ եկեղեցւոյ գաւթիմ մէջ
գտնուող Ս. Նիկողայոսի սեղանիմ վրա-
յնմ:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարիմ մէջ
պաշտուած մախատոմակիմ մախագահեց
Գերշ. Տ. Կիրեղ եպս. Գաբիկեան:

Կիր. 22 Դեկտ.- Յղութիւմ Ս.
Աստուածածնի եւ Բարեկեմդամ Ս. Յակո-
բայ Պահոց: Առաւօտունմ, Գերշ. Տ.
Կիրեղ եպս.ի գլխաւորութեամբ, Միաբա-
մ Հայրեր իմքմաշարծերով իջամ Գեթսեմա-
նիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք
գործեցիմ Ս. Աստուածածնայ Տաճար, ուր
Տիրամօր Ս. Գերեզմանիմ վրայ օրում
համդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ
քարոզեց Գերշ. Համդիսապետ Սրբազանը:

Ուր. 27 Դեկտ.- Նախատոմակիմ ի Ս.
Յակոբ մախագահեց Լուսարարապետ Գերշ.
Տ. Դաւիթ Արքեպս.:

Շր. 28 Դեկտ.- Ս. Յակոբայ Մծրմայ
Հայրապետիմ: Ս. Պատարագը մատուցուե-
ցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարմ էր Հոգշ.
Տ. Գուսամ Վրդ. Ալմամեան: Վերաբե-
րումը կատարուեցաւ Սուրբիմ մկարով
շիմուած շարժական սեղանիմ վրայնմ:

Կիր. 29 Դեկտ.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր
վերմատամ մատրամ մէջ: Ժամարարմ էր
Հոգշ. Տ. Աւետիս Աբղ. Իփրամեան:

Պաշտոմականք

Բշ. 2 Սեպտ.- Առաւօտունմ, Ամեն.
Ս. Պատրիարք Հայր, ի գլուխ Միաբա-
մութեան, բացումը կատարեց Ս. Թարգ-
մանչաց Երկր. Վարժարանի 1991-1992
տարեշրջանիմ եւ խօսեցաւ աշակերտնե-
րուն (թիւով 150) պատշան յորդորական
մը:

Դշ. 4 Սեպտ.- Առաւօտունմ, Ամեն.
Ս. Պատրիարք Հայր, ի գլուխ Միաբա-
մութեան, բացումը կատարեց Ժառանգ.
Վարժարանի եւ Ընծայարանի 1991-1992
տարեշրջանիմ եւ Սերմամացանի առակի
ըմթերցումնմ ետք պատշան յորդորական
մը խօսեցաւ ուսանողութեան:

- Կէսօրէ ետք, Հոգշ. Տ. Ամուշա-
ւան Մ. Վրդ. եւ Տիր Գ. Հիմդլեան
մերկայ գտնուեցան Ֆրէմներու Վարժա-
րանի սրահիմ մէջ, Ս. Գրական Ընկե-
րութեան (Bible Society) հիմնարկու-

թեան 175 ամեակի առթիւ կայացած
հաւաքոյթիմ:

Եշ. 5 Սեպտ.- Ամեն. Ս. Պատրիարք
Հայր, ըմկերակցութեամբ Գեր. Տ.
Սեւան եպս. Դարիպեանի, Էլ-Ալ օղամա-
ւայիմ ըմկերութեան հետ կարգադրուած
ժամանակացոյցիմ համաձայն, ճամբորդեց
դէպի Գամատա (Թորոնթօ, Մոնթրէալ),
ապա՝ 11 Սեպտեմբերիմ դէպի Գալիֆորնիա
(Լոս Անճելոս, Ֆրէզնօ, Սան Ֆրանցիս-
քօ), եւ Լոս Անճելոսնմ դէպի Նիւ Եօրք
17 Սեպտեմբերիմ, դէպի Ուստր 21 Սեպ-
տեմբերիմ, Ամերիկայի մէջ առաջիմ
Հայց. եկեղեցւոյ օծման 100-ամեակի
համդիսութեանց մասնակցելու, եւ 23
Սեպտեմբերիմ դէպի Բարիզ եւ Երեւան,
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի
հրաւերով մասնակցելու համար Միւռոն-
օրնութեան արարողութեանց:

Կիր. 8 Սեպտ.- Հրէից մօր, 5752
տարւոյ մախօրեակիմ, Ամեն. Ս. Պատ-
րիարք Հայր շնորհաւորական հեռագիր-
ներ դրկեց Իսրայէլի մախագահ Ն. Վսեմ.
Հայիմ Հէրցօկի, Վարչապետ Իցհաբ
Շամիրի, Քնէսէթի մախագահ Տօվ
Շիլանքիի եւ Երուսաղէմի Քաղաքապետ
Թէտի Բօլլէրի:

Եշ. 12 Սեպտ.- Կէսօրէ ետք,
Լատինաց Պատրիարք Մօմս. Միշէլ Սապ-
պահի կողմէ, Պատրիարքարանի Տաճարիմ
մէջ, Միջիմ Արեւելքի խաղաղութեան
համար մատուցուած համդիսաւոր Ս.
Պատարագիմ մերկայ եղաւ Աւագ Թարգման
Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանը:

Կիր. 15 Սեպտ.- Ռումանիոյ Թէոկ-
դէտիամոս Պատրիարքի ամուան տօմիմ
առիթով, երեկոյեան Ռումանական Ս.
Գէորգ եկեղեցւոյ պարտէզիմ մէջ կայա-
ցած ըմդումելութեան մերկայ եղան
Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ եպս.,
Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիր Գէորգ
Հիմդլեան:

Գշ. 17 Սեպտ.- Կէսօրէ առաջ,
Պատրիարքարան այցելութեան եկան Ամե-
րիկեան բամակի Chaplain Rev. Caiser

Դշ. 11 Սեպտ.- Կէսօրէ առաջ,
Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ եպս.,
Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիր Գ.
Հիմդլեան մերկայ եղան Բեթամիոյ Յու-
մաց Վանքի Տեսուչ Արշիմամտրիթ Թէո-
տոսիոսի յուղարկաւորութեան, որ
կատարուեցաւ տեղւոյմ Յումաց եկեղե-
ցիիմ մէջ:

Եշ. 19 Սեպտ.- Հոգշ. Տ. Ամուշա-
ւան Մ. Վրդ. մերկայ եղաւ Նէշըմըլ

պամոհի մէջ, Արաբ Առեւտրական (բա-
մուտրական) Գրասենեակի Համագումարի
բացումին:

Գշ. 24 Սեպտ.- Կէսօրէ ետք, Լու-
սարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.,
Գերշ. Տ. Կիրեղ Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիար Գէորգ Հիմդլեան
մերկայ եղան Հրէից Սուքքօթի (Տաղա-
ւարահարաց) տօմին առթիւ, Վսեմ.
Քաղաքապետ Թէտի Քօլլէթի կողմէ, Դաւիթ
բերդին մէջ տրուած ընդունելութեամբ:

Դշ. 2 Հոկտ.- Առաւօտուն, Հոգշ.
Տ. Ամուշաւամ Ծ. Վրդ. մերկայ եղաւ
Քնէսէթի դիմացի պարտէզին մէջ,
Արժէնթինի մախագահ Քարլօս Մէնէմի
բարեգալստեան դիմաւորութեամբ:

Եշ. 3 Հոկտ.- Առաւօտուն, Արժէմ-
թինի մեծապատիւ հիւրը այցելեց Ս.
Յարութեան Տաճար: Մեր կողմէ դիմաւո-
րութեան զացած էին Գերշ. Տ. Կիրեղ
Եպս., Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ
Եպս. եւ Տ. Ռազմիկ Վրդ.:

Ծր. 12 Հոկտ.- Երեկոյեան, Սպա-
նիոյ ազգային տօմին առթիւ, Սպանական
Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսա-
րանի պարտէզին մէջ սարքուած ընդու-
նելութեան մերկայ գտնուեցան Գերշ. Տ.
Սեւան Եպս., Հոգշ. Տ. Ամուշաւամ Ծ.
Վրդ., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիար
Գ. Հիմդլեան:

Եշ. 17 Հոկտ.- Կէսօրէ ետք, Սովետ
Միութեան Արտաքին Գործոց Նախարար
Պօրիս Փամբին այցելեց Ս. Յարութեան
Տաճար: Դիմաւորութեան մեր կողմէ
մերկայ էր Գերշ. Տ. Վաղարշ Եպս.,
Տեսուչը Տաճարին:

Կիր. 20 Հոկտ.- Կէսօրէ առաջ,
շաբաթ մը առաջ Ամմանի մէջ վախճանած
եւ եզրկտոս թաղուած Դպտոց Տքթ. Ամպա
Պասիլիոս Եպիսկոպոսի հոգւոյն համար,
իրենց Մայրավանքի մէջ կատարուած
համգտեան պաշտամունքին մերկայ եղան
Գերշ. Տ. Սեւան Եպս. եւ Հոգշ. Տ. Աւետիս
Աբեղայ:

- Երեկոյեան, Նօթր Տամի Եկե-
ղեցւոյ մէջ, Ն. Ս. Յովհաննէս-Պօղոս
Բ. Պապի Գահակալութեան 13-րդ տարե-
դարձի առթիւ Պապական մուխրակին կողմէ
մատուցուած համդիսաւոր Ս. Պատարագին
եւ յաջորդող ընդունելութեան մերկայ
գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ.
Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Գուսամ Վրդ. եւ
Տիար Գէորգ Հիմդլեան:

Եշ. 31 Հոկտ.- Երեկոյեան, Լու-
տերականներու եկեղեցւոյ մէջ,

Reformation Day-ի եւ մօր Propst
Carl Hans Ronecker-ի պաշտօնի մէջ
հաստատման առիթներով կատարուած արա-
րողութեան եւ պաշտամունքին մերկայ
գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ.
Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Ամուշաւամ Ծ.
Վրդ., Հոգշ. Տ. Գուսամ Վրդ. (որ
մեմերեցեց մաւ Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետի - որուն յիշատակի օրն էր
ըստ Նոր Տոմարի շարականէն տուն մը),
Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիար Գէորգ
Հիմդլեան, որոնք ապա մասնակցեցան
քովմտի սրահին մէջ տրուած
ընդունելութեան:

Բշ. 4 Նոյմ.- Կէսօրէ առաջ,
Ֆրանսական մօր ընդհ. Հիւպատոսը
այցելութեան եկաւ Պատրիարքարան:

Դշ. 6 Նոյմ.- Փարիզէն Ս. Աթոռ
ժամանց Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ.
Ժիրայր Ծ. Վրդ. Թաշմեան, ուխտաւոր-
ներու խումբով մը եւ վերադարձաւ
շաբաթ մը ետք:

Բշ. 11 Նոյմ.- Կէսօրէ առաջ,
Հարաւային Ափրիկէի մախագահ Ֆրէտէրիք
Տէ Քլէրք այցելեց Ս. Յարութեան
Տաճար: Մեր կողմէ դիմաւորութեան
մերկայ էին Տաճարին Տեսուչը՝ Գերշ.
Տ. Վաղարշ Եպս. եւ Հոգշ. Տ. Ամուշա-
ւամ Ծ. Վրդ.:

Գշ. 12 Նոյմ.- Արժօրվիլէն
(Ֆրանսա) Ս. Աթոռ ժամանց Ս. Ուխտիս
Միաբան Հոգշ. Տ. Ներսէս Ծ. Վրդ.
Բապուճեան, ուխտաւորներու խումբով մը
եւ վերադարձաւ շաբաթ մը ետք:

Կիր. 17 Նոյմ.- Կէսօրէ ետք,
Ֆրանսիականներու Մայր Տաճարին մէջ,
Երուսաղէմի մէջ առաջին Ֆրանսիական-
ներու մահատակութեան 600 ամեակին
առթիւ Հռոմէն յատկապէս ժամանած Կար-
տիմալ Փիօ Լակիի (որ Պապական մուխրակ
եղած է Երուսաղէմ) կողմէ մատուցուած
համդիսաւոր Ս. Պատարագին եւ յաջորդող
ընդունելութեան մերկայ գտնուեցան
Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ
Արքեպս., Հոգշ. Տ. Գուսամ Վրդ. եւ
Տիար Գէորգ Հիմդլեան:

Բշ. 18 Նոյմ.- Մեծապատիւ Կարտի-
մալը, իր հետեւորդներով, կէսօրէ առաջ
այցելութիւն մը տուաւ Պատրիարքարանիս
եւ տեսակցեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր
հետ:

Եշ. 21 Նոյմ.- Կէսօրէ ետք,
Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մախագահեց
Ս. Էջմիածին մատրան մէջ կատարուած
Համգ. Հրամոյ Նազգաշեանի յուրարկաւո-

րութեան: Համգուցեալը, գրագէտ եւ կրթական մշակ, Ուսուցչական Պաշտօն վարած է Եաֆա եւ Ս. Աթոռոյս Ժառ. Վարժարանէն մերս:

- Երեկոյեան, American Colony-ի մէջ, Շուետական մօր Հիւպատոս Michael Dahli-ի կողմէ տրուած ընդունելութեան մերկայ եղանակուսարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս., Հոգշ. Տ. Գուսան Վրդ. եւ Տիար Գ. Հիմնդէան:

Շր. 23 Նոյմ.- Կէսօրէ առաջ, Պատրիարքարան այցելեց Շուետական եկեղեցւոյ Արքեպս. Պերթիլ Ուէրքսթ-րօէմ եւ տեսակցեցաւ Ամեմ. Ս. Պատ-րիարք Հօր հետ:

- Երեկոյեան, Լուտերականներու Եպիսկոպոս Նա'իմ Նասսարի հրաւերով, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. եւ Տիար Գ. Հիմնդէան մերկայ եղանակուսարապետ Գերշ. Տ. Գուսան Վրդ. եւ Տիար Գ. Հիմնդէան:

Շր. 30 Նոյմ.- Երեկոյեան, St. Andrew's Day-ի առթիւ, Սկովտական եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեան եւ սրահին մէջ տրուած ընդունելութեան մերկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեան եւ Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալմամեան:

Պաշտօնականը

Բշ.- Կէսօրուան մօտ, Պատրիարքարան այցելեց Սպանիոյ Վարչապետ Ֆիլիպիտ Կոմզալեսի համեստափայլ Տիկինը:

Եշ. 5 Դեկտ.- Երեկոյեան, Հրէից Խանուկայի (Մակարայեցւոց) տօնին առթիւ, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ, Քաղաքապետարանի մէջ տրուած ընդունելութեան մերկայ գտնուեցան, Կիրեղ Եպս. Գաբրիէան, Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան եւ Տիար Գէորգ Հիմնդէան:

Բշ. 30 Դեկտ.- Կէսօրին, տարեփակի առիթով, Իսրայէլի մախագահ Վսեմ. Հայիմ Հէրցօկի ապարանքին մէջ Բրիստօնէական համայնքապետներու աւանդական այցելութեան մեր կողմէ մերկայ գտնուեցան Ամեմ. Ս. Պատրիարք Հայրը, հետմ ունեւալով Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս., Գերշ. Տ. Կիրեղ Եպս. եւ Տիար Գ. Հիմնդէան:

Գշ. 31 Դեկտ.- Այսօր տեղի ունեցաւ Բեթղէհէմ ընդհ. աւելը, որ ամացաւ առանց միջադէպի: